

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց

**1906/M21 <<Փախստականների միջազգային իրավական
պաշտպանությունը>>**

Որակավորման աստիճան

մագիստրոսի կրթական ծրագիր

Կազմեց

դասախոս Բ. Վարդանյանը

ԵՊՀ հրատարակչություն

Երևան 2013

Հրատարակվում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի ու
եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի որոշումներով

Քնարիկ Հակոբի Վարդանյան

ԾՐԱԳԻՐ «Փախստականների միջազգային-իրավական պաշտպանությունը»: Եր.: ԵՊՀ հրատ., 2013, 18

էջ

SYLLABUS “International legal protection of refugees” Yerevan: YSU Press, 2013, 18 pages

<<Փախստականների միջազգային-իրավական պաշտպանությունը>> (1906/M21)
ուսումնական դասընթացի ծրագիրը նախատեսված է բարձրագույն ուսումնական
հաստատությունների <<Իրավագիտություն>> մասնագիտությամբ մագիստրատուրայի և այլ հարակից
մագիստրոսական ծրագրերի մագիստրանտների համար: Այն օգնում է ամբողջական պատկերացում
կազմել դասընթացի շրջանակներում դասավանդվող նյութի բովանդակության վերաբերյալ: Ծրագիրը
պարունակում է ներածություն, որում շարադրված են ծրագրի հիմնական նպատակները, առարկայի
դասավանդման ակնկալվող արդյունքները, դասաժամերի քանակն ու տեսակները, ուսանողների
տեսական գիտելիքների ու գործնական կարողությունների ստուգման ձևերն ու գնահատման
չափանիշները, նախատեսված կրեդիտների քանակը, ինչպես նաև դասընթացի շրջանակներում
ուսումնասիրման ենթակա թեմաների ու դրանց մեջ ներառվող հարցերի հակիրճ նկարագրությունը և
դրանց լիարժեք ուսումնասիրության համար անհրաժեշտ իրավական ակտերի ու գրականության
ցանկը:

<<Փախստականների միջազգային-իրավական պաշտպանությունը>>

Ծրագրի ներածություն

1906/M21 Փախստականների միջազգային-իրավական պաշտպանությունը (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (32 ժամ դասախոսություն, 58 ժամ ինքնուրույն աշխատանք)

1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատմամբ դասընթաց

Դասընթացի նպատակը

Դասընթացը կոչված է ներկայացնելու փախստականների պաշտպանության միջազգային իրավական հիմնախնդիրները: Դասընթացի շրջանակներում ուսանողներին կներկայացվեն փախստականների կարգավիճակի ներառման և բացառման հիմքերը, նրանց իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նրանց միջազգային-իրավական պաշտպանության մեխանիզմները: Սույն դասընթացի շրջանակներում ուսանողները պատկերացում կկազմեն այնպիսի հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են ապաստանի իրավունքը, չվերադարձման սկզբունքն ըստ 1951թ. Փախստականների մասին կոնվենցիայի, միգրացիոն քաղաքականության ուրվագծերը տարբեր տարածաշրջաններում:

Սույն դասընթացի ավարտին ուսանողները կունենան պատշաճ գիտելիքներ փախստականների, ինչպես նաև ապաստան հայցող այլ կատեգորիայի անձանց իրավական կարգավիճակի, ինչպես նաև նրանց պաշտպանության ուղղված միջազգային իրավական մեխանիզմների մասին:

Կրթական վերջնական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը.

Կունենա

գիտելիք և իմացություն

- Փախստականի հասկացության և բնութագրիչ գծերի վերաբերյալ
- Ապաստան հայցող անձանց իրավական կարգավիճակի վերաբերյալ
- Փախստականների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ

Ունակ կլինի

(ընդհանրական կարողություններ)

- օգտվել փախստականների իրավունքների պաշտպանությանը վերաբերող տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ

- վերլուծել փաստեր, դատական գործեր, կատարել հետևություններ

(բուն մասնագիտական կարողություններ)

- ինքնուրույն գնահատել փախստականների իրավունքների պաշտպանության մեխանիզմների կիրառելիությունը
- բացահայտել փախստականների ինտեգրմանը խոչընդոտող օրենսդրական բացերի առկայությունը ՀՀ ներպետական իրավունքում,
- առաջարկություններ կատարել փախստականների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա բացերի վերհանման, կանխման և վերացման ուղղությամբ:

Ընթացիկ քննությունների անցկացման ձևերը և գնահատման չափանիշները.

1-ին ընթացիկ քննություն. Գրավոր թեսթային առաջադրանք՝ առավելագույնը 4 միավոր արժեքով: Առաջադրվում է 30 թեստային հարց. մինչև 15 ճիշտ պատասխանի դեպքում ուսանողը գնահատվում է 0 միավոր, 16-19 ճիշտ պատասխանի դեպքում՝ 1 միավոր, 20-23 ճիշտ պատասխանի դեպքում՝ 2, 24-27 ճիշտ պատասխանի դեպքում՝ 3 միավոր, 28-30 ճիշտ պատասխանի դեպքում՝ 4 միավոր: 1-ին ընթացիկ քննությունը ներառում է թեմաներ 1-6-ը ներառյալ:

2-րդ ընթացիկ քննություն. Բանավոր հարցում /Նախապես պատրաստված ռեֆերատի բանավոր ներկայացում/: Գնահատվում է առավելագույնը 4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները. Եզրափակիչ քննությունը բանավոր է, գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Հարցատոմսը պարունակում է 4 տեսական հարց, յուրաքանչյուրը 2,5 միավոր արժեքով: Միավորների քայլը՝ 0.5:

Դասընթացի բովանդակությունը

Թեմա 1: <<Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության>> հասկացությունը և համակարգը /2 ժամ դասախոսություն/

1. <<Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության>> հասկացությունը և առարկան:
2. <<Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության>> դերը միջազգային իրավունքի համակարգում:
3. Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության ձևավորումը և պատմական զարգացումը:

Հարցեր 1-3 – Անցկացվում է ներածական դասախոսություն:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Гудвин-Гилл Г. С. Статус беженца в международном праве. М., 1997
2. Григоричев К.В., Зимовина Е.П. Правовой статус беженцев. Экожан, 2005, стр. 7-26
3. Павлова Л. В., Селиванов А. В. Международно-правовой статус беженца. Пособие для студентов вузов. Минск: Тесей, 2006, стр. 5-8

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Введение в вопросы международной защиты беженцев. Защита лиц, находящихся в компетенции УВКБ. Пособие для самообучения, UNHCR, 2005
2. Hathaway J., The Law of Refugee Status, Butterworth, Toronto, 1991
3. Loescher G. 'The Origins of the International Refugee Regime' in Beyond Charity: International Co-operation and the Global Refugee Crisis (Oxford: Oxford University Press, 1993), p. 32–55.

Թեմա 2: Փախստականների միջազգային իրավական պաշտպանությանն ուղղված համընդհանուր և տարածաշրջանային փաստաթղթերը /4 ժամ դասախոսություն/

1. Փախստականների միջազգային իրավական պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթեր:
 - Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. Ժնևի Կոնվենցիա. Կոնվենցիայի նպատակները և կառուցվածքը, գործողության շրջանակները
 - 1967 թ. Արձանագրություն
 - Տարածաշրջանային փաստաթղթեր՝ Աֆրիկա, Լատինական Ամերիկա, Եվրոպա
 - ՄԱԿ ՓԳՀ գործադիր կոմիտեի եզրակացությունները
2. Միջազգային պաշտպանությունը և ՄԱԿ ՓԳՀ դերը:
 - ՄԱԿ ՓԳՀ վերահսկողական դերը /1951 թ. Կոնվենցիայի 35-րդ հոդված/. փորձը և վերահսկողության սահմանները:

Հարցեր 1-2 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկ /ՄԱԿ ՓԳՀ/, Երևան 2011
2. Гай С. Гудвин-Гилл, Статус беженца в международном праве. Москва: Юнити, 1997, с. 15-34.
3. Григоричев К.В., Зимовина Е.П. Правовой статус беженцев. Экожан, 2005, стр. 125-135
4. Павлова Л. В., Селиванов А. В. Международно-правовой статус беженца. Пособие для студентов вузов. Минск: Тесей, 2006, стр. 29-31
5. G. Goodwin-Gill and J. McAdam, The Refugee in International Law (Oxford: Oxford University Press, 2007), p. 15-51

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Связь между убежищем и миграцией. Учебно-методическое пособие. - Минск: Асобны, 2007, с. 129-169, 108-128
2. Robinson N. Convention Relating to the Status of Refugees: Its History, Contents and Interpretation (New York: Institute of Jewish Affairs, 1953)

Թեմա 3: Փախստականների միջազգային իրավական պաշտպանության հիմնական սկզբունքները և ապաստանի իրավունքը /2 ժամ դասախոսություն/

1. Փախստականների միջազգային իրավական պաշտպանության հիմնական սկզբունքները (չվերադարձման սկզբունք, չձերբակալման սկզբունք, խտրականության արգելման սկզբունքը)
2. Չվերադարձման սկզբունքը և ապաստանի իրավունքը /1951 թ. Կոնվենցիայի, Մարդու իրավունքների եվրոպական Խարտիայի, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի, ՔՔԲՄ մասին դաշնագրի վերլուծությունը/:
3. Ապօրինի մուտք գործելը և չձերբակալման սկզբունք:
4. Խտրականության արգելման սկզբունքը:

Հարցեր 1-4 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկ /ՄԱԿ ՓԳՀ/, Երևան 2011

2. Гудвин-Гилл Гай С. Статус беженца в международном праве.- Москва: Юнити, 1997, с. 146-209
3. Павлова Л. В., Селиванов А. В. Международно-правовой статус беженца. Пособие для студентов вузов. Минск «ГЕСЕИ» 2006, с. 21-23
4. Григоричев К.В., Зимовина Е.П. Правовой статус беженцев. - Караганда: Экожан, 2005,с. 77-87.

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Введение в вопросы международной защиты беженцев. Защита лиц, находящихся в компетенции УВКБ. Пособие для самообучения, 11 августа 2005.
2. Hathaway J. *The Law of Refugee Status* (Toronto: Butterworths, 1991), с. 24–27
3. Lauterpacht E. and Bethlehem D. ‘The Scope and Content of the Principle of Non-refoulement’ in E. Feller, V. Türk, and F. Nicholson (eds) *Refugee Protection in International Law: UNHCR’s Global Consultations on International Protection* (Cambridge: Cambridge University Press, 2003), p. 78–177
4. Noll G. ‘Seeking Asylum at Embassies: A Right to Entry under International Law?’ (2005) *17 International Journal of Refugee Law*, vol. 17, no. 3 (2005), p. 542-573.

Դատական գործեր

1. Chahal v. the United Kingdom, *15 November 1996*, Reports of Judgments and Decisions *1996-V*
2. Kharchenko v. Ukraine, *no. 40107/02, 10 February 2011*
3. Slivenko v. Latvia [GC], *no. 48321/99, ECHR 2003-X*

Թեմա 4 : Փախստական հասկացության ներառման հիմքերը ըստ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. Կոնվենցիայի /4 ժամ դասախոսություն/

1. Հետապնդման զոհ դառնալու հիմնավոր: Հետապնդման հիմքերը՝ ոստա, կրոն, ազգություն, դավանանք, որոշակի սոցիալական խմբի պատկանելիություն կամ քաղաքական հայացքներ: Հետապնդման բնույթը, հետապնդման գործակալները /պետական և ոչ պետական/:
2. Քաղաքացիության կամ մշտական բնակության երկրից դուրս գտնվելու հանգամանքը:
3. Քաղաքացիության երկրի պաշտպանության բացակայությունը:
4. Երկրի ներսում պաշտպանության և վերաբնակեցման հնարավորությունը

Հարցեր 1-4 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկ /ՄԱԿ ՓԳՀ/, Երևան 2011, էջեր 11-32
2. Гудвин-Гилл Гай С. Статус беженца в международном праве.- Москва: Юнити, с. 56-102
3. Павлова Л. В., Селиванов А. В. Международно-правовой статус беженца. Пособие для студентов вузов. Минск, Тесей, 2006, с. 45-46
4. Goodwin-Gill G. and J. McAdam, The Refugee in International Law (Oxford: Oxford University Press, 2007), p. 90-94

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Hathaway J. The Law of Refugee Status (Toronto: Butterworths, 1991), p. 169-179

Թեմա 5: Բացառման դրույթներ /2 ժամ դասախոսություն/

1. Բացառման դրույթների կիրառման ընդհանուր սկզբունքները:
2. Անձինք, որոնք չեն օգտվում միջազգային պաշտպանությունից: Փախստականի կարգավիճակի մասին 1951թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածում նշված հանցագործությունների վերլուծությունը միջազգային իրավունքի տեսանկյունից:

Հարցեր 1-2 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկ /ՄԱԿ ՓԳՀ/, Երևան 2011, էջեր 42-50
2. Гай С. Гудвин-Гилл. Статус беженца в международном праве.- Москва: Юнити, с. 121-145
3. Л. В. Павлова, А. В. Селиванов. Международно-правовой статус беженца. Пособие для студентов вузов. Минск: Тесей, 2006, с. 57-59
4. К.В. Григоричев, Е.П. Зимовина Правовой статус беженцев. Караганда: Экожан, 2005, с. 58-66

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Gilbert G. 'Current issues in the application of the exclusion clauses' in E. Feller, V. Türk, and F. Nicholson (eds.) 'Refugee Protection in International Law' UNHCR's Global Consultations on International Protection (Cambridge: Cambridge University Press, 2003), p. 425-478
2. Goodwin-Gill G. and McAdam J. The Refugee in International Law (Oxford: Oxford University Press, 2007), p. 421-446
3. Hathaway J. The Law of Refugee Status (Toronto: Butterworths, 1991), p. 91-114
4. Gallagher M., 'Soldier Bad Boy: Child Soldiers, Culture and Bars to Asylum' *International Journal of Refugee Law*, vol. 13, no. 3 (2001), p. 310
5. Gottwald M. 'Asylum Claims and Drug Offences: The Seriousness Threshold of Art. 1F(b) and the UN Drug Conventions', *International Journal of Refugee Law*, vol. 18, no. 1 (2006), p. 81-117

Թեմա 6: Փախստականի կարգավիճակի դադարեցումը /2 ժամ դասախոսություն/

1. Փախստականների կարգավիճակի դադարման հիմքերը ըստ Փախստականի կարգավիճակի մասին 1951թ. Կոնվենցիայի:
2. Փախստականի կարգավիճակի ճանաչումը չեղյալ հայտարարելը:

Հարցեր 1-2 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկ /ՄԱԿ ՓԳՀ/, Երևան 2011, էջեր 33-41
2. Гудвин-Гилл Гай С. Статус беженца в международном праве.- Москва: Юнити, с. 103-112
3. Павлова Л. В., Селиванов А. В. Международно-правовой статус беженца. Пособие для студентов вузов. Минск, Тесей, 2006, с. 55-57
4. К. В. Григоричев, Е. П. Зимовина. Правовой статус беженцев. Караганда: Экожан, 2005, с. 88-100
5. J. Hathaway, The Law of Refugee Status (Toronto: Butterworths, 1991), p. 191-205, 209-211

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Fitzpatrick J. and Bonoan R. 'Cessation of Refugee Protection' in E. Feller, V. Türk, and F. Nicholson (eds.) 'Refugee Protection in International Law: UNHCR's Global Consultations on International Protection (Cambridge: Cambridge University Press, 2003), p. 491-544
2. Goodwin-Gill G. and McAdam J. The Refugee in International Law (Oxford: Oxford University Press, 2007), p. 139-142
3. Hathaway J. 'The Right of States to Repatriate Former Refugees', Ohio State Journal on Dispute Resolution, vol. 20 (2005), p. 175
4. Milner D. 'Exemption from Cessation of Refugee Status in the Second Sentence of Art. 1C(5)/(6) of the 1951 Refugee Convention', International Journal of Refugee Law, vol. 16, no. 1 (2004), p. 91-107

Թեմա 7: Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգ /4 ժամ դասախոսություն/

1. Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգը, դրա իրականացումը պետական մարմինների և ՄԱԿ ՓԳՀ կողմից
 - Հարցազրույցի անցկացում
 - Ապացուցման պարտավորությունը
 - Երկրի մասին տեղեկությունների հավաքագրում
 - Հատուկ խմբերի կարիքներ
 - Գնահատում և վերլուծություն

Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Refugee Status Determination, Identifying who is a refugee, Self-study module 2, UNHCR, September 2005
2. Права человека и защита беженцев, Пособие для самообучения 5, Том 2, 15 декабря 2006

Թեմա 8: Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանությունը /4 ժամ դասախոսություն/

1. Փախստականների և ապաստան հայցողների իրավունքները և պարտկանությունները:

2. Փախստականների իրավունքների պաշտպանության միջազգային և ներպետական նորմերը:
3. «Prima facie» փախստականներ:

Հարցեր 1-3 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկ /ՄԱԿ ՓԳՀ/, Երևան 2011
2. Гай С. Гудвин-Гилл. Статус беженца в международном праве. Москва: Юнити, с. 432-437.
3. К. В. Григоричев, Е. П. Зимовина. Правовой статус беженцев. Караганда: Экожан, 2005, с. 88-100
4. G. Goodwin-Gill and J. McAdam, The Refugee in International Law (Oxford: Oxford University Press, 2007), p.524-527.

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Hathaway J. 'Attachment to the Asylum State' and 'Rights of Refugees Lawfully Staying', The Rights of Refugees under International Law (Cambridge: Cambridge University, 2005), p. 156-160, 730-912.

Թեմա 9: Փախստականների հիմնահարցը ՀՀ համատեքստում /2 ժամ դասախոսություն/

1. 1988-1992 թթ. զանգվածային հոսքերը և Հայաստանի կառավարության արձագանքը:
2. Փախստականների հիմնահարցին վերաբերող ՀՀ օրենսդրությունը:

Հարցեր 1-2 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Դասախոսությունների տեքստ - Բ. Վարդանյան «Փախստականների իրավունքների պաշտպանության ՀՀ օրենսդրություն»

Թեմա 10: Ընտանիքի միասնության սկզբունքը /2 ժամ դասախոսություն/

1. Ընտանիքի միավորումը կարգավորող միջազգային նորմերը և փորձը:
2. ՀՀ գործող նորմերը և կիրառման պրակտիկան:

Հարցեր 1-2 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկ /ՄԱԿ ՓԳՀ/, Երևան 2011, էջեր 56-57
2. UNHCR_Guidelines_on_Reunification_of_Refugee_Families[, July 1983

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. K. Jastram, and K. Newland, ‘Family Unity and Refugee Protection’, in E. Feller, V. Türk, and F. Nicholson (eds), Refugee Protection in International Law: UNHCR’s Global Consultations on International Protection (Cambridge: Cambridge University Press, 2003), p. 555–603

Թեմա 11: Ապաքաղաքացիություն /2 ժամ դասախոսություն/

1. Ապաքաղաքացիության վերաբերյալ 1954թ. և Ապաքաղաքացիության դեպքերի կրճատման մասին 1967թ. կոնվենցիաները:
2. ՄԱԿ ՓԳՀ դերը ապաքաղաքացիության դեպքերի կրճատման գործում:
3. Ապաքաղաքացիության խնդիրները ՀՀ-ում:

Հարցեր 1-3 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Քաղաքացիություն և ապաքաղաքացիություն : Ձեռնարկ խորհրդարանականների համար : Թիվ 11, 2005
2. Քաղաքացիությունից զրկված անձանց պաշտպանությունը, ՄԱԿ ՓԳՀ, 2010
3. Ապաքաղաքացիության կանխումը և կրճատումը, ՄԱԿ ՓԳՀ, 2010
4. Օգնելով աշխարհի քաղաքացիություն չունեցող անձանց, ՄԱԿ ՓԳՀ, 2011

Թեմա 12: Ներքին տեղահանված անձինք /2 ժամ դասախոսություն/

1. Ներքին տեղահանված անձանց հասկացությունը. Տարբերությունը ներքին տեղահանվածների և փախստականների միջև:
2. Ներքին տեղահանվածների իրավունքները կարգավորող միջազգային-իրավական փաստաթղթերը:
3. Ներքին տեղահանվածների իրավական կարգավիճակը տարածաշրջանում:

Հարցեր 1-3 - Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով: Ակնկալվում է ուսանողի կողմից նախապես ծանոթացումը թեմային վերաբերող պարտադիր գրականությանը:

Թեմային վերաբերող պարտադիր գրականություն

1. Гудвин-Гилл Гай С. Статус беженца в международном праве. Москва: Юнити, с. 313-318
2. Павлова Л. В., Селиванов А. В. Международно-правовой статус беженца. Пособие для студентов вузов. Минск: Тесей, 2006, с. 71-72
3. Cohen R. 'Strengthening Protection of IDPs: The UN's Role', Georgetown Journal of International Affairs (Winter/Spring 2006), p. 101–109

Թեմային վերաբերող լրացուցիչ գրականություն

1. Entwisle H. 'Tracing Cascades: The Normative Development of the U.N. Guiding Principles on Internal Displacement', Georgetown Immigration Law Journal, vol. 19 (2004–2005), p. 369–390
2. Geissler N. 'The International Protection of Internally Displaced Persons', International Journal of Refugee Law, vol. 11, no. 3 (1999), p. 451–478
3. Kälin W. 'The Role of the Guiding Principles on Internal Displacement', Forced Migration Review, (October 2005), p. 8–9
4. Luopajarvi K. 'Is there an Obligation on States to Accept International Humanitarian Assistance to Internally Displaced Persons under International Law?', International Journal of Refugee Law, vol. 15, no. 3 (2003), p. 678–714

Ինքնուրույն աշխատանքի /ռեֆերատի պատրաստում/ ուղեցույց

Ուսանողը ռեֆերատ է ներկայացնում դասախոսի կողմից նախապես ներկայացված թեմաներից իր ընտրությամբ կամ իր կողմից ներկայացված մեկ այլ թեմայով: Յուրաքանչյուր թեման կարող է ներկայացվել միայն մեկ ուսանողի կողմից: Կատարված աշխատանքը թղթային տարբերակով ինչպես նաև էլեկտրոնային թոստով կամ էլեկտրոնային կրիչի վրա ներկայացվում է ամբիոն:

Աշխատանքի ձևավորման պահանջներն են.

. տառատեսակ՝ հայերենը՝ Sylfaen Unicode

ռուսերենը և եվրոպական այլ լեզուները՝ Times New Roman

. տառաչափ՝ 12

. միջտողային քայքայ՝ 1,5

. էջադրման չափեր՝ ձախից՝ 3 սմ, աջից՝ 1,5 սմ, վերևից և ներքևից 2 սմ

. էջերի համարակալում՝ ներքևում, կենտրոնում:

Գիտական աշխատանքի ծավալը՝ բուն շարադրանքի հատվածը՝ 10-15 էջ:

Աշխատանքը պետք է ունենա՝

. տիտղոսաթերթ,

. բովանդակության ցանկ,

. բուն շարադրանք,

. օտագործված գրականության ցանկ:

Աշխատանքում պարտադիր են այն աղբյուրներին հղումները, որոնք օգտագործվել են աշխատանքը գրելիս:

Աշխատանքի տիտղոսաթերթը պետք է կազմել տվյալների հետևյալ հերթականությամբ՝

. ԲՈՒՀ-ի, ֆակուլտետի և ամբիոնի ամբողջական անվանումը,

. դասընթացի անվանումը,

. դասախոսի անուն ազգանունը և գիտական կոչումը,

. աշխատանքի վերնագիրը,

. հեղինակի անուն ազգանունը, կուրսը, էլ. փոստի հասցեն:

Բանավոր առաջադրանքի /ռեֆերատի/ համար առաջարկվող թեմաների ցանկ

1. Փախստական/հասկացության զարգացումը:
2. Փախստականների և ապաստան հայցողների իրավունքները և պարտականությունները:
3. Փախստականների իրավական կարգավիճակը սահմանող համընդհանուր աղբյուրները:
4. Փախստականների իրավական կարգավիճակը սահմանող տարածաշրջանային աղբյուրները:
5. Ընտանիքի միասնության սկզբունքի կիրառումը ԵՄ երկրներում:
6. Ընտանիքի միասնության սկզբունքի կիրառումը միջազգային հանրությունում:
7. ՄԱԿ ՓԳՀ-ի ձևավորումը և զարգացումը:
8. ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը կապված մտահոգության առարկա հանդիսացող անձանց հետ:
9. Ապաքաղաքացիության հասկացությունը, ապաքաղաքացիության վերաբերյալ միջազգային փաստաթղթերը:
10. ՄԱԿ ՓԳՀ-ի դերը և գործողությունները ապաքաղաքացիության կրճատման գործում:
11. Ներքին տեղահանված անձանց հասկացությունը և կարգավիճակը:
12. Ներքին տեղահանված անձանց իրավունքները կարգավորող փաստաթղթերը:
13. ՄԱԿ ՓԳՀ-ի վերահսկողական դերը (1951թ. կոնվենցիա, հոդված 35), գործունեության հիմնական ուղղությունները և վերահսկողության սահմանները:
14. Փախստական կանանց և երեխաների իրավական կարգավիճակը:
15. Ապաստանի եվրոպական համընդհանուր համակարգ:
16. Փախստականների իրավունքի և մարդու իրավունքների միջազգային պաշտպանության հարաբերակցությունը:
17. «Փախստական» հասկացության ներքո չընդգրկված անձանց պաշտպանության տրամադրումը. լրացուցիչ պաշտպանություն
18. Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգը: Ապացուցման պարտականությունը:
19. Փախստականների հիմնահարցին վերաբերող ՀՀ նորմատիվ-իրավական ակտերը: «Փախստականների և ապաստանի մասին» 2009թ. Հայաստանի Հանրապետության օրենքը:
20. Փախստականների հիմնախնդրի մշտական լուծումները:

Ուսանողը կարող է նաև ռեֆերատ պատրաստել ցանկում տեղ չգտած թեմայով՝ դասախոսի հետ համաձայնեցնելով:

Եզրափակիչ քննության հարցաշար

1. Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության ձևավորումը և զարգացումը:
2. Փախստականների պաշտպանությանն ուղղված միջազգային-իրավական փաստաթղթերը մինչև «Փախստականների կարգավիճակի մասին» Ժնևի 1951թ. կոնվենցիայի ընդունումը:
3. Փախստականների միջազգային-իրավական պաշտպանությանն ուղղված համընդհանուր փաստաթղթերը:
4. Փախստականների միջազգային-իրավական պաշտպանությանն ուղղված տարածաշրջանային փաստաթղթերը:
5. ՄԱԿ ՓԳՀ Գործադիր կոմիտեի եզրակացությունները:
6. Փախստականների պաշտպանությանն ուղղված միջազգային և ներպետական կառույցները:
7. Փախստականների միջազգային-իրավական պաշտպանությունը և ապաստանի իրավունքը:
8. Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության հիմնական սկզբունքները:
9. Non-refoulement /չվերադարձելու/ սկզբունքի նորմատիվ բովանդակությունը:
10. Փախստականի կարգավիճակի ներառման հիմքերը:
11. Փախստականի կարգավիճակի բացառման հիմքերը:
12. Փախստականների կարգավիճակի դադարման հիմքերը:
13. Փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու հիմքերը և ընթացակարգը:
14. Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության լրացուցիչ միջոցները, մանդատային փախստականներ:
15. Առանձնահատուկ դեպքեր /պատերազմի փախստականներ, դասալիք փախստականներ/
16. Փախստականների և ապաստան հայցողների իրավունքները և պարտականությունները:
17. Փախստականների իրավունքների պաշտպանության միջազգային և ներպետական նորմերը:
18. Ընտանիքի միասնության սկզբունքը:
19. ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատը կապված մտահոգության առարկա հանդիսացող անձանց հետ:
20. Ապաքաղաքացիության հասկացությունը, ապաքաղաքացիության վերաբերյալ միջազգային փաստաթղթերը:
21. ՄԱԿ ՓԳՀ-ի դերը և գործողությունները ապաքաղաքացիության կրճատման գործում:
22. Ներքին տեղահանված անձանց հասկացությունը և կարգավիճակը:
23. Ներքին տեղահանված անձանց իրավունքները կարգավորող փաստաթղթերը:
24. ՄԱԿ ՓԳՀ-ի վերահսկողական դերը (1951թ. կոնվենցիա, հոդված 35), գործունեության հիմնական ուղղությունները և վերահսկողության սահմանները:
25. Հատուկ կատեգորիայի ապաստան հայցողների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները. փախստական կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությունը:
26. Ապաստանի եվրոպական համընդհանուր համակարգ:
27. Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգը: Ապացուցման պարտականությունը:
28. Փախստականի կարգավիճակի տրամադրումը համաձայն ՀՀ օրենսդրության:

29. Փախստականների հիմնահարցին վերաբերող ՀՀ նորմատիվ-իրավական ակտերը:
«Փախստականների և ապաստանի մասին» 2009թ. Հայաստանի Հանրապետության օրենքը:
30. Փախստականների հիմնախնդրի մշտական լուծումները:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա) Միջազգային փաստաթղթեր

1. Մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագիր (1948)
2. Փախստականների կարգավիճակի մասին Ժնևի 1951թ. Կոնվենցիա և դրան կից 1967թ. Արձանագրություն
3. Տարածքային ապաստանի մասին ՄԱԿ-ի 1967 թ. Հռչակագիր
4. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Դաշնագիր (1966)
5. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին Դաշնագիր (1966)
6. Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ Կոնվենցիա ()
7. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Ժնևի 1966թ. Կոնվենցիա
8. Կանանց նկատմամբ ամեն տեսակ խտրականության վերացման մասին 1979թ. Կոնվենցիա
9. Երեխաների իրավունքների մասին 1989թ. Կոնվենցիա
10. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. եվրոպական կոնվենցիա
11. Աֆրիկայում փախստականների հիմնախնդիրների կոնկրետ ասպեկտները կարգավորող 1969թ. Կոնվենցիա
12. Փախստականների մասին 1984թ. Կարթագենյան հռչակագիր
13. Ապաքաղաքացիների կարգավիճակի մասին 1954թ. Կոնվենցիա
14. Տարածքային ապաստանի մասին 1954թ. Կարակասի Կոնվենցիա
15. Ներքին տեղահանվածների վերաբերյալ ՄԱԿ-ի ուղենշող սկզբունքներ
16. ՄԱԿ ՓԳՀ 1950թ. Կանոնադրություն

Բ) Ներպետական օրենսդրություն

1. ՀՀ Սահմանադրություն (1995)
2. Փախստականների և ապաստանի մասին ՀՀ օրենք (2008)
3. Քաղաքական ապաստանի մասին ՀՀ օրենք (2001)
4. Պետական սահմանի մասին ՀՀ օրենք (2001)
5. Սահմանապահ զորքերի մասին ՀՀ օրենք (2001)

6. Օտարերկրացիների մասին ՀՀ օրենք (2007)
7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին ՀՀ օրենք (1995)
8. <<Հատուկ կացարան>> պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին ՀՀ Կառավարության N407-Ն որոշում (2003)
9. ՀՀ-ում ապաստան հայցողների գրանցամատյանի ձևը հաստատելու մասին ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային Անվտանգության Ծառայության Սահմանապահ Ջոռքերի հրամանատարի (N91-Ն), ՀՀ Ոստիկանության պետի (N6-Ն) և ՀՀ Տարածքային կառավարման նախարարի (N35-Ն) համատեղ հրաման
10. ՀՀ Նախագահի հրամանագիր ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կառավարման ոլորտում Միգրացիոն պետական ծառայություն ստեղծելու մասին (2009)
11. Փախստականներին տրվող Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի նկարագիրը և փաստաթուղթը տալու կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության N1417-Ն որոշում (2009)
12. Միգրացիայի հարցերով ՀՀ Կառավարության լիազորած պետական մարմին ճանաչելու մասին ՀՀ Կառավարության N301-Ն որոշում (2010)

Գ) Դասագրքեր, մենագրություններ, գիտական հոդվածներ

1. Փախստականի կարգավիճակը սահմանող ընթացակարգերի և չափանիշների ձեռնարկ, ՄԱԿ ՓԳՀ, Երևան 2005, 107 էջ
2. Гай С. Гудвин-Гилл. Статус беженца в международном праве, 1997г., 647 стр.
3. Григоричев К. В., Зимовина Е. П. Правовой статус беженцев. Караганда: Экожан, 2005, Павлова Л.В., Селиванов А.В. Международно-правовой статус беженца. Пособие для студентов ВУЗов. Минск: Тесей, 2008, 208 с.
4. Иванов, Д.В. Беженцы в современном международном праве. - М.: Межд. отношения, 2006., 200 с.
5. Положение беженцев в странах мира, 1995г., УВКБ ООН
6. Руководство по процедурам и критериям определения статуса беженцев УВКБ ООН, 1992г
7. Сборник нормативно-правовых документов по защите прав беженцев, УВКБ ООН, Бишкек 2004
8. James C.Hathaway The rights of refugees under international law, Cambridge University press, UK, 2005, 1184 p.
9. Pogosian G., Conditions of Refugees in Armenia, Yerevan 1996.
10. Robinson N., Convention relating to the Status of Refugee: A Commentary, Institute of Jewish Affairs, New York, 1953

Ինտերնետային կայքեր

- 1 www.un.org - ՄԱԿ
- 2 www.unhcr.org – ՄԱԿ ՓԳՀ
- 3 www.unhcr.am – ՄԱԿ ՓԳՀ-ն Հայաստանում
- 4 www.europa.eu.int – ԵՄ-ն և նրա մարմինները
- 5 www.refugeelawreader.org